

**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ  
ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ**

Բնության հատուկ պահպանվող տարածքները, համաձայն միջազգային չափանիշների, մակերևութային ու ստորերկրյա ջրերի, ընդերքի, ցամաքի, բուսական, կենդանական աշխարհի և համապատասխան օդային տարածությունների օրենքով սահմանված կարգով առանձնացված հողամասեր են և առանձին բնական օբյեկտներ, որոնք բնապահպանական, գիտական, առողջապահական, մշակութային, ռեկրեացիոն, գեղագիտական արժեք են ներկայացնում և լրիվ կամ մասամբ, ժամանակավորապես կամ մշտապես հանվում են տնտեսական շահագործումից և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ:

Հայաստանում այն ձևավորվել է 1958 թվականից: Այդ համակարգի զարգացման ռազմավարության բացակայությունը հանգեցրեց բնության հատուկ պահպանվող տարածքների առանձնացման միակողմանի ուղղվածությանը, որը նպատակաուղղված էր հանրապետության անտառների պահպանությանը: Ներկայումս գործում են 3 պետական արգելոցներ (Խոսրովի, Շիկահողի, Էրեբունու)՝ 39 285 հա ընդհանուր մակերեսով, երկու ազգային պարկ («Սևան» և «Իլիջան»)՝ 178 300 հա ընդհանուր մակերեսով և 23 պետական արգելավայրեր՝ 81 737 հա ընդհանուր մակերեսով: Պահպանվող տարածքների ընդհանուր մակերեսը հանրապետությունում կազմում է շուրջ 299 322 հազար հա կամ ընդհանուր տարածքի մոտ 10 %-ը: Այստեղ պահպանվում են հանրապետության բուսական և կենդանական աշխարհի տեսակային կազմի 60 %-ը: Ցամաքային լանդշաֆտների պահպանվող տարածքները կազմում են հանրապետության տարածքի մոտ 6 %-ը, որը նման լանդշաֆտային ու կենսաբանական հարուստ բազմազանություն և մարդածին ճնշում ունեցող երկրի համար խիստ անբավարար է:

Հայաստանում արգելոցային գործի արմատական բարելավումը բնապահպանական տեսակետից սկզբունքային նշանակություն ունի, որպես խախտված էկոհամակարգերի վերականգնմանը, չափանմուշային էկոհամակարգերի և գենոֆոնդի պահպանությանը, բնության տարեզրության վարմանը նպատակաուղղված անհրաժեշտ գործողությունների ամբողջություն:

Հետևաբար այն պետք է հետապնդի հետևյալ նպատակներն ու խնդիրները,

- ❖ բնական պաշարների վերականգնումը և վերարտադրությունը,
- ❖ բարենպաստ էկոլոգիական հավասարակշռության ապահովումը,
- ❖ շրջակա միջավայրի պահպանությունը,
- ❖ ռեկրեացիայի զարգացման հնարավորությունների ապահովումը,
- ❖ գիտահետազոտական աշխատանքների նպատակային իրականացումը,
- ❖ էկոլոգիական կրթության հիմունքների կատարելագործումը,
- ❖ անխափան տեղեկատվության ապահովումը:

Հայաստանում բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանությունը իրականացնում են պետական ոչ առևտրային կազմակերպությունները, որոնց պահպանման ծախսերը հիմնականում կատարվում են Հայաստանի պետական բյուջեի միջոցների հաշվին, որոնք խիստ անբավարար են:

Հասարակական և շուկայական հարաբերությունների ձևավորման ներկա ժամանակահատվածում կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության պահպանության և կայուն օգտագործման գրավականը բնապահպանական և տնտեսական ոլորտների ինտեգրացման ուղղությամբ ձեռնարկվող գործողությունների իրականացումն է, որի դեպքում բնական էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանության լավագույն միջոցը բնօգտագործման արդյունավետ տնտեսական մեխանիզմների կիրառումն է:

Ելնելով վերը շարադրվածից և հաշվի առնելով վերջին 15 տարիների ընթացքում ձևավորված միջազգային չափանիշները՝ անհրաժեշտ է, որպեսզի Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներում կիրառվեն բնօգտագործման տնտեսական մեխանիզմներ, որոնք կնպաստեն հանրապետությունում արգելոցային գործի արդյունավետությանը և շահավետությանը: Ակնհայտ է, որ բնության հատուկ պահպանվող տարածքներում բնօգտագործման տնտեսական մեխանիզմների ներդրումը պայմանավորված է այս բնագավառում հասարակական հարաբերությունները

կարգավորող օրենսդրության բարեփոխումներով, որոնցում առանցքային նշանակություն ունեն պահպանվող տարածքների մասնակցային կառավարման պլանների հասկացության և դրանց մշակման ու կյանքի կոչելու գաղափարական և քաղաքական հիմունքների հստակ ամրագրումը:

Բնության հատուկ պահպանվող տարածքի կառավարման պլանը տվյալ տարածքի պահպանության, վերականգնման և օգտագործման գործունեությունը կարգավորող պաշտոնական փաստաթուղթ է և պետք է կազմվի հինգ տարի ժամկետով՝ համաձայն այդ նպատակով մշակված և հաստատված մեթոդական ցուցումների:

Ընդ որում՝ կառավարման պլանները պետք է կրեն մասնակցային բնույթ, որով կապահովեն բնապահպանական ու տնտեսական ոլորտների ինտեգրացման ուղղությամբ պահպանվող տարածքներում և դրանց պահպանական գոտիներում ձեռնարկվող գործողությունների իրականացումը: Այդ տեսակետից կարևոր նշանակություն ունի նաև պահպանվող տարածքների և կենսաբանական բազմազանության մոնիտորինգի իրականացումը, որը կարող է հիմք հանդիսանալ ընկալելու ազդեցության էությունը և միջոցներ ձեռնարկել պահպանության համար:

Մասնակցային կառավարման պլանների կազմումը և մոնիտորինգի իրականացման գործողությունները նաև կդիտարկեն պահպանվող տարածքների տնտեսական արժեքները, բնակչության համար դրանց հասանելիությունը, ինչպես նաև տեղական համայնքներին շահույթի մասնահանման արդյունավետ քաղաքականության և մեխանիզմների մշակումը, որը հնարավորություն կտա պահպանվող տարածքների լիարժեք գործունեության համար ապահովել կայուն ֆինանսավորում:

Հայաստանի Հանրապետությունում բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանի մշակման, հաստատման և իրագործման շահագրգիռ կողմեր կարող են հանդիսանալ՝

- ❖ ՀՀ կառավարությունը,
- ❖ ՀՀ հանրապետական գործադիր մարմինները,
- ❖ ՀՀ տարածքային կառավարման մարմինները,
- ❖ ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինները,
- ❖ Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանությունն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունները,
- ❖ Գիտահետազոտական և ուսումնական կազմակերպությունները,
- ❖ Հասարակական կազմակերպությունները,
- ❖ Գյուղացիական տնտեսությունները,
- ❖ Տնտեսվարող կազմակերպությունները,
- ❖ Բնօգտագործողները:

Մշակված կառավարման պլանները կնպաստեն այս բնագավառում գործող իրավական ակտերի առավել արդյունավետ և հավասարակշռված կիրարկմանը, որի հետևանքով պահպանվող տարածքներում զգալիորեն կկանխարգելվեն զլոբալ կարևորության կենսաբազմազանության կորուստը, կբարելավվի տնտեսական գործունեության հավասարաչափ իրականացումը: Կառավարման պլանների կարևորագույն նպատակն է ապահովել, որպեսզի կենսաբազմազանության պահպանության պահանջները հավասարակշռվեն տեղական բնակչության կենսամակարդակի բարելավմանն ուղղված օժանդակության հետ:

Կառավարման պլանի մշակման ընթացքում անհրաժեշտ է՝

1. Գնահատել պահպանվող տարածքներում և դրանց պահպանական գոտիներում տնտեսական գործունեության, ինչպես նաև բնական պաշարների օգտագործման բնագավառում շահագրգիռ կողմերի միջև փոխհարաբերությունների ներկա բնույթը.
2. Բացահայտել պահպանվող տարածքների և դրանց պահպանական գոտիների ու հարակից տարածքների բնակչության կողմից կենսաբանական ռեսուրսների (անտառ, անտառային կողմնարդյունք, արոտավայրեր, խտտհարքներ, ջրային կենսաբազմազանություն) օգտագործման հասանելիության առանձնահատկությունները, դրանց կապը աղբատության, բնական պաշարների պահանջմունքների և ստացված շահույթի հետ և տալ ռիսկի մեղմացման միջոցները.
3. Բացահայտել պահպանվող տարածքներում և դրանց պահպանական գոտիներում կենսաբանական ռեսուրսների օգտագործումից ստացված շահույթի արդարացի բաշխման

ներկա առանձնահատկությունները և տալ առաջարկություններ պահպանվող տարածքների, տեղական համայնքների ու ռեսուրսօգտագործողների միջև շահույթի արդյունավետ մասնահանման վերաբերյալ.

4. Պահպանվող տարածքներում իրականացնել դեպի ամառային արտավայրեր անասունների տարանցիկ տեղափոխման խնդիրների ուսումնասիրություն.
5. Իրականացնել պահպանվող տարածքների և դրանց պահպանական գոտիների կենսաբանական և գենետիկական ռեսուրսների (բնափայտ, անտառային պտուղներ և հատապտուղներ, ուտելու բույսեր, կերաբույսեր, դեղաբույսեր, սնկեր, խեցգետիններ, ձկներ, թռչուններ, կաթնատուներ) գույքագրում, տալ դրանց տնտեսական գնահատականը և այդ ռեսուրսների հիմնական տեղաբաշխումը պահպանվող տարածքների և դրանց պահպանական գոտիների սահմաններում.
6. Բացահայտել պահպանվող տարածքների և դրանց պահպանական գոտիների էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող հիմնական գործոնները. որոշել շրջակա միջավայրի վրա տնտեսական գործունեության տարբեր ձևերի ազդեցության չափանիշները և մշակել էկոհամակարգերի վիճակի զարգացման միտումների կանխագուշակման մեթոդներ.
7. Դիտարկել տուրիզմի զարգացման ուղիները և գնահատել տուրիզմի ձևերի (մեքենայով, ձիով, ոտքով և այլն) և բնույթի (արկածային, գիտաճանաչողական, մշակութային և այլն) տնտեսական կարևորությունը և ազդեցությունը.
8. Սահմանել տուրիզմի համար թույլատրելի տարածքները և դրանցում օպտիմալ ծանրաբեռնվածությունը՝ ըստ սեզոնային և տարվա կտրվածքի, ինչպես նաև որոշել շրջակա միջավայրի վրա ռեկրեացիոն գործունեության տարբեր ձևերի ազդեցության չափանիշները և տալ տուրիզմի օպտիմալ ծանրաբեռնվածության քարտեզագրումը պահպանվող տարածքների և դրանց պահպանական գոտիների համար:

Պահպանվող տարածքների կառավարման պլանները պետք է կազմված լինեն ըստ գործառնական գոտիների՝ նշելով յուրաքանչյուր գործողության իրականացման պատասխանատու կողմը և ժամանակացույցը: Կառավարման պլանները պետք է ընդգրկեն՝

1. Պահպանվող տարածքի կառավարման ներկա վիճակը, անձնակազմի կառավարման կարողությունների մակարդակը և կարողությունների հզորացման գործողությունների պլանը, դրա իրականացման պատասխանատու կողմերը և ժամանակացույցը.
2. Պահպանվող տարածքների և դրանց պահպանական գոտիների կենսաբանական և գենետիկական ռեսուրսների գույքագրման տվյալները և քարտեզագրական նյութը, դրանց տնտեսական գնահատականը, օգտագործման հնարավորությունները, շրջակա միջավայրի վրա տնտեսական գործունեության տարբեր ձևերի ազդեցության չափանիշները և էկոհամակարգերի վիճակի զարգացման միտումների կանխագուշակման մեթոդները.
3. Պահպանվող տարածքներում և դրանց պահպանական գոտիներում էնդեմիկ, հազվագյուտ և վտանգված տեսակների, դրանց աճելավայրերի, բնադրավայրերի, սպրելավայրերի և միգրացիոն ուղիների վիճակի ու դրանց փոփոխության պատճառները.
4. Պահպանվող տարածքներում ռեկրեացիոն գործունեության առանձնահատկությունները, կարգավորման ուղիները, իրականացման պատասխանատու կողմերը և ժամանակացույցը.
5. Պահպանվող տարածքներում և դրանց պահպանական գոտիներում մոնիտորինգի իրականացման վերաբերյալ առաջարկությունները՝ ներառյալ իրականացման մեթոդական ցուցումները.
6. Տեղական համայնքների բնօգտագործողների գործունեության կարգավորման վերաբերյալ առաջարկությունները, որոնք անհրաժեշտ են ապահովելու կենսաբազմազանության պահպանությունը.
7. Պահպանվող տարածքների կառավարման պլանների մշակման, իրականացման, վերանայման և իրականացման մասնակցային մոնիտորինգի գործընթացներում շահագրգիռ կողմերի մասնակցության վերաբերյալ առաջարկությունները.
8. Պահպանվող տարածքների արտաքին և տարածքա-գործառնական գոտիների սահմանների, ինչպես նաև դրանց հատակագծերի պլանշետները և թվային քարտեզները՝ տալով սահմանների և տեղանքների նկարագրությունները:

Ընդհանրացնելով՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

- Կառավարման պլանավորման գործընթացում անհրաժեշտ է ապահովել բոլոր առանցքային շահագրգիռ կողմերի մասնակցությունը.
- Կառավարման պլանները կնպաստեն պահպանվող տարածքների և դրանց կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրմանը.
- Կառավարման պլանները կօժանդակեն պահպանվող տարածքների անձնակազմի կարողությունների հզորացմանը՝ նպատակաուղղված պահպանվող տարածքների և դրանց պահպանական գոտիների էկոհամակարգերի արդյունավետ պահպանությանն ու մոնիտորինգի իրականացմանը.
- Կառավարման պլանները կնպաստեն պահպանվող տարածքների և դրանց պահպանական գոտիների էկոհամակարգերում կենսաբազմազանության վիճակի ինդիկատորների բացահայտմանը.
- Կառավարման պլանները կնպաստեն պահպանվող տարածքներում գլոբալ կարևորության կենսաբազմազանության կորուստի կանխարգելմանը.
- Կառավարման պլանները կօժանդակեն պահպանվող տարածքների և դրանց պահպանական գոտիների տարածքներում բնական պաշարների օգտագործման մատչելիության առանձնահատկությունների, ինչպես նաև տուրիզմի զարգացման հնարավորությունների բացահայտմանը.
- Կառավարման պլանները կնպաստեն պահպանվող տարածքների և դրանց պահպանական գոտիների տարբեր էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա տնտեսական և ռեկրեացիոն գործունեության ազդեցության բացահայտմանը:

Սամվել Բալոյան  
Կենսաբանական գիտությունների դոկտոր

Ջրատարակվում է Բնական պաշարների կառավարման և  
չքավորության նվազեցման ծրագրի շրջանակում



«Աջակցություն բարեփոխումներին» ՀԿ  
[www.reforms.am](http://www.reforms.am)

տպաքանակը՝ 5 000